

# «ԵՐԵՎԱՆ ԲԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

#### «ԵՐԵՎԱՆ ԲԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 82-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Յուրաքանչյուր տարի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ստուգման նպատակով ավագանին պետք է ներգրավի աուդիտորական կազմակերպություն:»:

**Հոդված 2.** Օրենքի 82-րդ հոդվածը լրացնել 4.1., 4.2. և 4.3. մասերով հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Աուդիտորական կազմակերպության ընտրությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ավագանու կողմից:

4.2. Աուդիտորական կազմակերպությունը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ստուգման արդյունքներով պետք է կազմի աուդիտորական եզրակացություն, որը պետք է ներկայացնի ավագանուն:

4.3. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ստուգման արդյունքներով կազմված եզրակացության մեջ իրավախախտումների մասին տեղեկություններ հայտնաբերելու դեպքում ավագանին դիմում է համապատասխան իրավասու մարմինների:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: